

ծայելու։ Միթէ չեմք գիտեր որ լումաներու հաւաքմամբ սոկիներու բիւրեր կազմով հասարակութիւններ աղ կան։

Այլ Մայր Տաճարի ներկայն և անհրաժեշտ նորոգութիւնն ալ այնպիսի կէտ մի է, որ կարժէ վրան յատկապէս խօսիլ։

ՄԱՂԱԳԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՕՐՄԱՆԵԱՆ.

ԿՐՈՆ

Աստուած իրան յայտնումէ մարդոց նորա համար միայն, որ նորանց սորվեցնէ՝ թէ ինչ է Խնքն ու թէ մարդիկ ինչ են պարտաւոր անելու։ ուրեմն Կրօնն իսկապէս ուրիշ բան չէ, եթէ ոչ Աստուածային մի լոյս, որ Աստծուն յայտնումէ մարդոց, ու կարգի դնում, կանոնաւորում նորանց պարտականութիւնները դէպի Աստուած։ Ամենաբարձրեալը՝ թէ յայտնուելովն աշխարհիս վերայ, և թէ իւր հոգով լցնելովը կարգից դուրս մարդոց, իւր բռնած ձանապարհների մէջ մի նպատակ միայն ունի, կամ կարող է ունենալ, այն է՝ ճանաչեցնել ու սուրբ անել տապ Խւր անունը տիեզերքի մէջ, և հասաւատել մի սուրբ, մի երկրպագելու պաշտօն, որ պիտի մատուցանեն միայն Խրան, մի պաշտօն, որ միայն Խրան է վայել և պատշաճ։

Կրօնի նիւթի մէջ՝ հնութիւնը նորա այնպիսի մի գրոշմն ու առանձնայատկութիւնն է, որ մարդուս բանականութիւնը միշտ մեծապէս յարգումէ։ ու կարելի է ասել թէ՝ մի հաւատ, մի Աստուածոյ պաշտօն՝ որ առաջին մարդոց կրօնովն է սրբագործուած ու հին ժամննակների մարդոց մաքուր ու պարզ հոգովը։ շատ հնուց կազմած մի հաստատ համոզմունք է, որ վկայումէ նորա իսկութեանը։ Կրօնի ճշմարիտ լինելը նորա համար չէ, որ ստութիւնը շատ անգամ չփառաւորուի իսկութեան կերպարանքով և ճշմարտութեան իրդ նոյնպիսի տիտղոսներով։ կամ թէ ցոյց տալու համար, որ մարդոց մէջ չկան հին մոլորութիւններ ու սխալմունքներ, որ կարծես վէճի մէջ են մտնում ճշմարտութեան հետ իրանց շատ հին ծագումն ունենալու մասին։ բայց ոլ որ ուզումէ նորա պատմութիւնը հետազոտել, դժուար չէ գնալ, հասնել մինչեւ նոցա սկիզբն առնելու

Ժամանակն ու տեսնել մոլար կրօնի այն նօրութիւնն, որով եւ բեռումէ վրան իւր յատկանիշը, որ թէև հաստատ մի կրօնի յատկանիշը նման է, բայց աւելի անբաժան է սխալմունքից:

Կրօն՝ Աստուծոյ՝ երկրիս վերայ ունեցած բոլոր դիտաւորութիւնների նպատակն է: Ինչ որ արել է նա այս աշխարհիս վերայ, մարդոց համար է: Ամենայն բան պիտի ծառայէ աշխարհիս ու նորա վերայ ապրող մարդոց մեծանալուն, աւելանալուն և յառաջ երթալուն: առաքինութիւններն և մոլութիւնները, մեծերն ու հասարակ ժողովուրդը, բարի կամ չար պատահմունքները, յաջողութիւններն ու ձախորդութիւնները: առատութիւնն ու հասարակաց ազէտներն և թշուառութիւնները, բարձրանալն ու ընկնելը թագաւորութեանց, մի խօսքով, ամեն բան կը պէտք է գործակից լինի աշխարհիս ու մարդոց կազմակերպութեան ու աճման: Բռնակալները կրօնը մաքրեցին, զտեցին իրանց հալածանքներով. անհաւատներն ու ամբարիշտները չափից դուրս ազատասէրներն ու անառակներն իրանց գայթակղական կեանքովն ապացուցին նորա ճշմարտութիւնը և հաստատեցին նորա սրբութիւնը. արդարները հաւատոյ վկաներն են. եկեղեցւոյ հովիւնները՝ նորա ուսման աւանդապահները, թագաւորներն ու իշխանութիւնները՝ նորա ճշմարտութեան պաշտպանները:

Քրիստոնէական կրօնի սկիզբն առնելու կամ ճագման պատմութիւնը նոյն իսկ աշխարհիս սկիզբն առնելու պատմութիւնն էլ է: Միւս կրօնները, որ պարծեցել են իրանց աւելի հին ճագումն ունենալովը, իւրեանց հնութեան մասին իջրեւ երաշխաւորութիւն տուել են մեզ առասպելախառն զրոյցներ, և իրանք իրանց ոչնչացրել են: Նորանք աշխարհի պատմութիւնն այլանդակել են անհամար՝ երեւակայական, դարերի քաօսով, որոնցից ոչ մի իրողութիւն չէ մնացել ապագայ սերունդին, և որ աշխարհի պատմութիւնն երբէք բանի տեղ չէ գրել: Այս անհեթեթ առասպելների հեղինակները շատ դարերից յետոյ են գրել այս անցըերը որ մեզ պատմում են: Ամեն բան արդէն ասած, պրծած կըլինիմ, երբ որ ասածներիս վերայ աւելացնեմ թէ այսպիսի առապելական աստուածաբանութիւնը ստեղծաբանութեան պտուղ է, և թէ այս արուեստի գիւտերն եղան այդ կրօնի ամենահաստատուն հիմն,

Աւետարանը ստորացնել, ու նորա թշնամիների հին հայույանքն ընդունել կըլինէր, եթէ որ այդ ստեղծաբանութիւնները տգետ ժողովրդի հաւատ համարէինք ու խաւարամիտ մարդոց մի աղանդ։ Թէև ճշմարիտ է, որ աշխարհիս կայսրներն ու Եշողներն աւած չհաւատացին Քրիստոսի տուած ուսմանը, նորա աւետարանին, բայց նորա վարդապետութիւնը պարսաւում էր աշխարհիս տէրերի ոչ թէ իշխանութիւնը, այլ միայն նորանց մոլորութիւնները։ Պէտք էր միանդամայն ցոյց տալ աշխարհին, որ Աստուծոյ զօրութիւնը կարօտ չէր մարդկային զօրութեան։ Պէտք էր ցոյց տալ, որ աշխարհի հաւատ ընծայելը կամ չընծայելը՝ ու աշխարհային իշխանութեան հեղինակութիւնն ու զօրութիւնն անօգուտ էին երկնքից իջած մի վարդապետութեան համար։ Պէտք էր յայտնուէր մարդոց, որ Քրիստոսի երկնագույն կրօնը ինքն իրան բաւական էր բոլոր աշխարհիս վերայ հաստատուելու։ Պէտք էր իմացուէր, որ աշխարհիս բոլոր իշխողներն ու պետերն իրանց հակառակ հրատարակելով Փրկչին, ու նորա տուած ուսման, ու հալածելով նորա հետեղներին՝ պէտք է հաստատէին միայն նորա վարդապետութիւնը։ և թէ՛ եթէ Քրիստոսի քարոզած հաւատն իրան թշնամի չունենար ամենից առաջ աշխարհիս մեծերին, նորան պակաս պիտի լինէր այն գըլխաւոր նշանն ու առանձնայատկութիւնները, որով յետոյ նորանց իւր աշակերտներն արեց, սովորցնելով մեր Փրկչից ու նորա առաքեալներից քարոզած և աւանդած այն ուսումը, որ մարդուս ոչ միայն այս ցաւալից աշխարհիս ամենայն փորձանքների ու ձախորդութիւնների մէջ անփորձ և անսասան է պահում, այս աշխարհում մինչեւ անգամ երջանկութեան ճաշակը պարգևում, այլև արժանացնում է անանց և յաւիտենական երջանկութեան։

Եթէ կայ մի ճշմարիտ կրօն աշխարհիս վերայ, այդ կրօնն ամենից աւելի հինը պէտք է լինի. այդ կրօնը պիտի լինի մարդուս առաջին և ամենահսկական պարտականութիւնը դէպի Աստուծած, որ հաճումէ մեր հոգւոյ պաշտօնն ու երկրպագութիւնն ընդունել և պէտք է պաշտուի. և այս պարտականութիւնը պէտք է նոյնչափ հին լինի, որչափ որ հին է մարդս ինքը. և որովհետեւ կրօնը կցուած, կապուած է իւր քնութեան հետ. մարդս, այսպէս ասեմ, հէնց կրօնի հետ էլ ծնուած պիտի լի-

նի. և ահա պյս է ճշմարիտ կրօնի առանձնայատկութիւնը, ո-
րով զանազանութեմ է քրիստոնէից կրօնն աւելորդապաշտու-
թիւններից ու աղանդներից, Աշխարհիս վերայ եղած կրօններից
դա ամենահինն է: Առաջին մարդիկը ամբարշտութեան պաշ-
տօնի հետեւելուց և իւրեանց համար քարից, փայտից չաս-
տուածներ տաշել շինելուց առաջ նոյն Աստուածն էին պաշ-
տում, որ մենք ենք պաշտում: Նորան էին կանգնում սեղան-
ներ, նրան էին մատուցանում զոհեր, նորա բարերարութիւնից
էին ակնկալում իրանց ադաքինութեան հասուցումն ու վար-
ձատութիւնը, ու նորա արդարութիւնից էին սպասում ստա-
նալ իրանց անհնագանդութեան պատիժը:

Հետեւենք ամեն մի ազգի, ամեն մի երկրի փուչ բաներն Աս-
տուծոյ տեղ պաշտելու պատմութեանը, ու կտեսնենք, որ տեղել
են որոշ թերով տարիներ, ու յետոյ իրանց աղանդաւորների ու-
նեցած իշխանութեան ու զօրութեան հետ ընկել: Միտքներո
քերենք հին աշխարհակալների պատմութիւնն՝ ու կտեսնենք,
որ նորանք նուածում էին աղքերի չաստուածներին այդ ազգեր-
ին նուածելու հետ միասին, ու ջնջումէին նորանց հաւատն
ու արարողութիւնները, նորանց տէրութիւնը կործանելով:
Մի միայն մեր նախնեաց կրօնը պահպանուեց հէնց իւր սկզբից,
ամեն աղանդների ջնջուելուց յետոյ էլ կեանք ունեցաւ ու շա-
րունակեց իւր գոյութիւնը. և չնայելով իւր հետեւողների ու-
նեցած տարբեր վիճակներին, միշտ հօրից որդւոցն անց կացաւ
ու մնաց իրեւ մի նուիրական ժառանգութիւն, ու ժամանակ
չեղաւ, երբ նա ջնջուէր մարդոց մոքից:

Աստուծոյ հաւատարիմ ժողովուրդը գրեթէ միշտ անզօր է
եղել, նեղուել, հալածուել, երբեմն գերի լինելով, երբեմն փա-
խըստական, երբեմն՝ հարկատու. հսզար անդամ տեսած է, որ
Քաղդէացիք, Ասորեստանցիք, Բաբիլոնացիք, աշխարհիս վերայ
եղած շատ մեծ տէրութիւնները, բոլոր աշխարհս միաբանուել
է իւր գէմ, որ բոլորս վիճ ջնջեն, վերջացնեն իւր հաւատը: Բայց
այն շատ ակար ու անզօր ժողովուրդը, որ նեղուեց ու չար-
չարուեց Եղիպտոսում, որ թափաւեց անսպատաւմ, որ ստի-
պուեց յետոյ իւր երկրից ատրագրուիլ ու գերի գնալ օտար եր-
կիրներ, երբէք ըրջնջուեցաւ աշխարհիս երեսից. մինչդեռ ու-
րիշ շատ հզօր ազգեր մարդկային վաղաւեր և վաղանցուկ բա-

ների վիճակին հանդիպեցան, և այն ժողովրդի հաւատը միշտ կայ ու կայ իւր հետը, չնայելով, որ գրեթէ ամեն մի գար ամեն ջանք և ոյժ է բանեցրել որ ջնջէ նորան:

Թարգմ. ԳՐԻԳՈՐ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՂԱՓԻՐԵԱՆ

ՔՐԻՍՏՈՍԻ ԾՆՈՒՆԴԸ

Եթզէհէմից երկու վերստ հեռու կայ մի փոքրիկ դաշտ, ուր ձիթենեաց անտառում կանգնած է մի աղքատիկ և կարծես անտէր թողած մատուռ որ շինուած է յանուն Հրեշտակապետին «Աւետաբերին Հօվուաց»։ Ըստ աւանդութեան այդ մատուռը հիմնարկուած է ճիշտ այն տեղում, ուր քրիստոնեայ ականջաց քաղցրալուր աւետեաց համաձայն, որ տալիս է սուքբն Ղուկաս—Հովիւք էին ի տեղուջն այնմիկ բացօթեայք, որ պահէին զպահպանութիւնս գիշերոյ հօտից իւրեանց։ Եւ հրեշտակ ծեառն երեւեցաւ նոցա, և փառք ծեառն ծագեցին առ նոսաւ։ և լսեցին նոքա ուրախարար աւետիուր, որ այն օրը ծնաւ Փրկիչը, որ է Քրիստոս Տէր, Դաւթի քաղաքում։

Փրկչի ծննդեան պարագայքը վերին աստիճանի աղքատիկ էին և ամեն բան այդ տեղում՝ ցոյց էր տուլիս քաւորութիւն և ծանր աշխատաւոր կեանք։ Պէտք էր որ այդ գիշեր բացուէր երկինքը. լուսապայծառ երգիչների մեծաձայն փառաբանութեամբ լըցուած, աստղերը և արածող հօտերը, լուսոյ և ձայների խառնուրդը գիշերային լուսութեան մէջ, հաւատացեալ սրտերի ցնծութիւնը—այս բոլորը գոյներ են, որով կարելի է սքանչելի, երկնային և հրաշալի պատկերը նկարել։ Բայց աւետարանչի համառօտ և սրտաշարժ պատմութիւնը չէ ասում մեզ, որ հրեշտակների երգը լսելի էր և ուրիշներին, բացի չնչին գիւղի անքուն հովիւներից, որոնք ցուրտ և խոնաւ ձմեռնային գիշերով պահպանումէին իրանց հօտը գայլերից և աւազակներից—նոյն իսկ գաշտում, ուր Փրկչի նախամայրը՝ Հուութ, վշտահար սրտով, ուրիշի արտից ժողովումէր հասկերը և Դաւթի՛ բաղմանդամ՝ ընտառնիքի եղբայրներից կրտսերը և մանկահասը, արածում էր իւր հօր ոչխարները (Ս. Հ. 71)։